ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 10.11.2016թ. ԹԻՎ 461-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

24 նոյեմբեր 2016 թ,
ժամը 12:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ
Ս.Գյագունց ԿԾ պետ
Հանձնաժողովի անդամներ
Յու.Իվանով ԿԾ ՌԿԿ ղեկ.
Հանձնաժողովի քարտուղար
Հ. Հակոբյան

Ա.Մելիք-Հովսեփյանը չմասնակցեց հանձնաժողովի նիստին:

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՆ-ՊԸԱՊՁԲ-03/16 ծածկագրով CFIP-108 ռադիոռելեային կայանի պահուստային բլոկների և պարագաների գնման պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացում և գնահատում:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցի անվանումը և հասցեն՝

- <<SAF Texnika>> ԲԸ (հասցե՝ Լատվիա ք.Ռիգա Գանիբու Դեմբիս 24ա)

1. Ծրարը կազմելու և ներկայացնելու տվյալների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ ծրարը կազմված և ներկայացված է համապատասխան սահմանված կարգին: Մասնակիցի կողմից ներկայացված ծրարում առկա էին սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են սահմանված պահանջներին: Մասնակցի կողմից ներկայացվել էին նաև որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (նմանատիպ պայմանագիր), ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:
2. Հանձնաժողովի նախագահ Ս.Գյագունցը հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ 9 625 000 ՀՀ դրամ: Այնուհետև գնահատվեց մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկը: <<SAF Texnika>> ԲԸ կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 16 575 Եվրո 80 ցենտ *(ՀՀ Կենտրոնական Բանկը 24.11.2016թ. ժամը 12:00 դրությամբ մեկ եվրոյի համար սահմանել է 508.51 ՀՀ դրամ փոխարժեք, հաշվի առնելով նշված հանգամանքը՝* <<SAF Texnika>> ԲԸ *գնային առաջարկը կազմում է 8 428 960 ՀՀ դրամ):*

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Սույն ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<SAF Texnika>> ԲԸ
2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել ՀԱՆ-ՊԸԱՊՁԲ-03/16 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը,
3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 05.12.2016թ. <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ս.Գյազունց		Հանձնաժողովի նախագահ
Յու.Իվանով		Հանձնաժողովի անդամ
Հ.Հակոբյան		Հանձնաժողովի քարտուղար